

27.02.2023 թ. Երևան

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանին՝
ՀՀ քաղաքացի Հովհաննես Բազրատի Հովհաննեսյանից
Բնակության և ծանուցման հասցե՝
ՀՀ, ք. Երևան, Նոր Արեշ 11 փող., 18/1 տուն

ԻՐԱԶԵԿՈՒՄ

Հանրային հավաքի անցկացման մասին

Հարգելի պարոն Սարգսյան

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ և 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ անցկացնելու եմ հանրային հավաք՝ հանդես գալով որպես կազմակերպիչ և հավաքի ղեկավար:

Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ իրազեկմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

1. Հավաքի վայրը՝ Երևան, Մատենադարանին կից տարածք
2. Հավաքի սկզբի և ավարտի ժամանակը՝ 2023 թ. մարտի 24-ը, 25-ը, 26-ը, 27-ը, ժամը 00-24:00-շուրջօրյա
3. Հավաքի նպատակը՝ Հայաստանի ներքաղաքական հարցերի քննարկում
4. Մասնակիցների սպասվող թիվը՝ շուրջ 1000, պահպանելով համավարակի հետ կապված բոլոր օրինական պահանջները:
5. Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները՝ դրոշներ, պաստառներ, վրաններ, պլաստիկ սեղաններ և աթոռներ, հովանոցներ, բարձրախոսներ, ձայնի ուժեղարարներ, էլեկտրասնուցման համար անհրաժեշտ մալուխ և այլ տեխնիկական սարքեր:
6. Կարգադրիչների նախատեսվող թիվը՝ 10 մարդ:
7. Հավաքի ընթացքում (ժամը 18:00-21:00) նախատեսվում է երթ՝ Մատենադարան–Մաշտոցի պող.-Սայաթ-Նովա պողոտա-Աբովյան փողոց- Հանրապետության հրապարակ- Ամիրյան փողոց-Մաշտոցի պողոտա-Մատենադարան երթուղով:
8. Հավաքի կազմակերպչի տվյալները՝
Ազգանուն, անուն, հայրանուն՝ Հովհաննես Բազրատի Հովհաննեսյան
9. Հավաքի ղեկավարի տվյալները՝
Ազգանուն, անուն, հայրանուն՝ Գասպարյան Վահե Քրիստափորի,

Վերոգրյալի հաշվառմամբ խնդրում եմ՝

1. Օրենքի սահմաններում ապահովել նշված հավաքին մասնակցողների իրավունքների լիարժեք իրացումը
2. Սույն իրազեկման քննարկումը, դրա վերաբերյալ ակտերի ընդունումը և տեղեկացումն իրականացնել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ դեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով:

Առդիր՝ հավաքի կազմակերպչի նույնականացման քարտի լուսապատճենը՝ 1 թերթ:

Հավաքի կազմակերպիչ Հովհաննես Հովհաննեսյան